

ի վերայ երկրի և հող տապանի, աստ և ի հանդերձելումն և յամենայն ժամու։ ամէն։ Այլ և տացէ ձեզ Տէր Աստուած կրկնակի բարութիւն, առատութիւն և լիութիւն, խաղաղութիւն և խնդութիւն, առողջութիւն և կարողութիւն, զաւրութիւն և արիութիւն, հաստատութիւն և անշարժութիւն, ուրախութիւն և բերկրութիւն, սէր և միաբանութիւն, և ամենայն բարի իւրաց աղոթութիւն և կատարելութիւն։ ամէն։ Այլ և ի հասանել բանիս առ ձեզ, զամենայն ներհակս շարին՝ ի բարին փոխարկեսցէ։ զնեղութիւն՝ ի յարձակութիւն, զչարշարանքն՝ ի հանգիստ, զդառնութիւն ի քաղցրութիւն, ըզտրտմութիւն՝ յուրախութիւն, զսուգն ի խնդութիւն, զարտասուքն՝ ի ծաղր, զհիւանդութիւն՝ յառողջութիւն, զմահն՝ ի կեանք, զնվազութիւն՝ յառատութիւն, զպակասութիւն յուրովութիւն, զթերութեան ի լիութիւն, զխռովութիւն՝ ի խաղաղութիւն, զատելութիւն՝ ի սէր, զթշնամութիւն ի հաշտութիւն, զծուրութիւն՝ ի յարիւթիւն և յաստուածային օրհնութիւն։ ամէն։

Եւ ընդ օրհնութեանս ծանուցումն լիցի ձեզ վասն Զատիկին համար, թէ լոյսն զերեզմանին որպէս ելաւ ի գատկէն ժէ աւուր յետև Երուսաղէմայ պարոնին քօֆիսայեան¹ Ուրխով յԵստամբօլ եկաւ, և եկաւ ի Մահմուտ փաշային քարվանսարայն իջաւ. և Հոռոմիին ելան ի մօտն գնացին և ասացին, թէ յԵրուսաղէմէ ինչ խապար ունիս. նայ ասաց այն քօֆիսայեան Հոռոմեբուն, թէ դուք ինչ ազգ էք. և նոքա ասացին թէ մեք Հոռոմ ենք։ Եւ քօֆիսայեան ասաց, թէ ձեզ մասլաֆաթ չկայ, գնացէք դուք, թող հայ ազգն գայ։ Եւ յԵստամբօլ քաղաքս համբաւն վերացաւ, թէ յԵրուսաղէմայ մարդ եկեր է։ Եւ Հայոց ազգն քահանայք և տօլվաթորնի ի միատեղ ժողովեցան և գնացին մօտ ի այն քօֆիսայեան. և եհարց, թէ ինչ ազգ էք. և նոքա ասացին, թէ մեք Հայ ենք. Եւ ասաց, թէ ձեզի ուրախութեան խապար եմ բերեր. և Հայոց ազգս առին զքօֆիսայեան, և բերին ի պազաստանն։ Եւ հանեց ի դուրս մէկ յարապի գիր, հօքում² մի, որ յԵրուսաղէմայ սանճախպակուն մօհրն ի վերայ էր, և զատուն մօհրն ի վերայ էր, և սուպաչուն և էմենին մօհրն ի վերայ էր. և հետն մէկ աղէկ կարգացող զատի մի այլ կայր. երես ի նորա ձեռքն, թէ կարդա. և այն զատին այլ առաւ ի ձեռքն, և բարձր կարգաց ի պազաստանին մէջն, որ տաճիկ և ճհուտ և հոռոմ և հայ և ՀԲ (72) միլաթ ամէնն լսեցին. և գրած էր այսպէս. Թէ, յԵրուսաղէմ քաղաք՝ Հոռոմ և Ֆռանկն, Հապաչն և Կուրճին և Խպթին, այս Ե ազգս՝ ապրիլի 2 զատիկ են ասացեր. և Հայ, և Ասորին և Նեսդորն և Մարոնին, այս չորս ազգս ապրիլի ԺԳ զատիկ են ասացեր. և շատ աղմուկ է եղեր. և Հոռոմին պատրիարգն ի յամէն աշխարհ թուխթ է զրկեր, թէ ինչ զատար որ գլուխ մարդ կայ՝ նայ թող գայ. Հայերն մեղ այսպէս բան կ'այնեն։ Եւ հոռոմ ազգն հանց շատ եկեր է՝ ԺԲԹ (12,000) հօգի եղեր է. և

1. Թր. Քեհեա. ոստիկան, գլխաւոր։

2. Հրամանագիր։